

Միջին հայերենի շարահյուսության հարցերը պատկանում են հայ լեզվաբանության այն բնագավառին, որը մինչև այժմ համարյա ուսումնասիրված չի եղել: Եթե նկատի չունենանք Յ. Կարստի «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն»¹ աշխատության մեջ շարահյուսական թուղթիկ ականարկները, ինչպես նաև Կ. Կուսիկյանի «Ակնարկներ հայ պատմական շարահյուսության մասին»² դիրքը, որտեղ ևս շատ ականարկային ձևով է խոսվում միջին հայերենի շարահյուսական երևույթների մասին, կարելի է վստահորեն ասել, որ միջին հայերենի շարահյուսությունը ուսումնասիրված չէ: Բնականաբար, մեզ հետաքրքրող հարցը՝ ուրիշի խոսքի քերականական արտահայտությունը միջին հայերենում, առհասարակ ոչ մի ուղադրության չի արժանացել, մինչդեռ այն հանդես է բերում մի շարք առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրությունը ունի տեսական կարևոր նշանակություն:

Միջին հայերեն գրվածքներում, որոնք տարբերվում են մեղ ավանդված գրաբար ստեղծագործություններից իրենց ժանրային բաղմաձևությամբ, շարահյուսական-ոճական այս միջոցը անհամեմատ լայն ծավալ է ստանում: Միջին դարերի պատմական, գեղարվեստական, իրավաբանական, բժշկական գրականության լեզուն թեև նման է գրաբարին, սակայն հարստացել է քերականական նոր իրողություններով: Լինելով գրաբարի և ժամանակակից հայերենի, այսպես կոչված, միջին վիճակը, այն զգալիորեն տարբերվում է երկուսից էլ՝ հնչյունական, ձևաբանական, բառակազմական, ինչպես նաև շարահյուսական յուրահատկություններով:

Շարահյուսության մեջ հանդես եկած նոր ու հետաքրքիր երևույթները, որոնց թվում և ուրիշի խոսքի՝ գրաբարի և ժամանակակից հայոց լեզվի համեմատությամբ հանդես բերած շարահյուսական-ոճական կիրառության յուրատեսակությունը, անկասկած, լեզվաբանական ուսումնասիրության կարիք են զգում:

Այժմ փորձենք քննել, թե ուրիշի խոսքը ի՞նչ միջոցներով է արտահայտվում միջին հայերենում, ի՞նչ տարբերություններ ունի գրաբարի և ժամանակակից հայերենի համեմատությամբ:

Ուրիշի խոսքը լինում է երեք տեսակի՝ ուղղակի, անուղղակի (որի մեջ է դասվում նաև գործարարական-անուղղակի խոսքը) և անիսկական ուղղակի:

Ուղղակի խոսք — Ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքի հետ կապակցվում է, այսպես կոչված, ասացական կամ իմացական բայերով և անջատվում նրանից հնչերանգային հատուկ դադարով: Միջին հայերենում այդ նպա-

¹ J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901.

² И. К. Куснъян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, 1959.

տակով՝ ամենից հաճախ կիրառվում են ասել, պատասխանել (պատասխան, պացխուն տալ), բարբառել, պստմել, աւետել, փողել, ծայնել, պատուիրել, աղաղակել, հարցնել (հարցուկս լինել), գոշել, կանչել, հառաչել, հնչել, հիլայել (ամբաստանել) և այլ բայերը:

Եւայ պատասխան ետ նրմա*. օձն խաբեաց զիս և կերայ (ՀԵ, 232): Ֆալաբն պացխուն կուտայ. մի հաշեր, անգետ հալետուր (Ֆրիկ, 376): Սիրեցեալն տարփմամբ անձկալուն բարբառէր՝ մի զիս մերձենար (ՆՇ, 391): Պատմէին դասուց մետասանիցն, «ցրնծացէք, յարեալ տէրն ի մեռելոց» (ՆՇ, 391): Նոր ծայն աւետեաց հրեշտակապետն այսօր... «Խաշելալն յարեալ, ձեզ մեծ աւետիս» (ՆՇ, 425): Հայցելին առ նա ծայնէր. ո՞վ դու Մարիամ, Զիս՝ որ յարութիւն և կեանք՝ զի ուրաւ մեռեալ (ՆՇ, 39): «Նքե ոք լին ճորտ հիլայէ զիս ի մարդասպանութիւն, քէ «Ինայ մարդն սպաննել է զիմ ոք, կամ զորդի, կամ զօտար... Նա բերէ ի դարպասն զհիլայածն (Անս., 33): «Եւ ի ժամ մահուան կոշեաց զանդրանիկն և ասէ.— Ահա որդեակ, ժառանգութիւն բազում տամ քեզ (էջ 21): Այս ասացական բայերը կիրառվում են ոճի բազմադանոթյան համար: Ուրիշի խոսքը կապման իս նրանք օգնում են միտքը ալիւի համարժեք ու ճիշտ արտահայտւում: Օրինակ, երբ ասում ենք ծայնել, ապա զրա հետ միասին ընկալում ենք նաև ասելու պոթողութիւնը, որը այս դեպքում օժտված է որոշակի հուլական հրանդով: Այդպես նաև՝ աղաղակել՝ աղաղակելով ասել, գոշել՝ գոշելով ասել և այլն: Եվ ահա թե ինչ է նկատվում միջին հայերենում. ասել բային փոխարինող մյուս բայերը ալիւի շատ կիրառվում են այն գործերում և այն հեղինակների մոտ, որոնք ալիւի մոտ են պարբարին, այսպես կոչված «ոսականութիւն» պարբարով են գրում, ինչպես, օրինակ, Ներսիս Շնորհալին, Մխիթար Հերացին և այլն: Մինչդեռ որքան գրական գործը նման է ժողովրդական խոսքին՝ «ոսականութիւն»³ կամ «գրաբարախառն ոսականութիւն» է, այնքան շատ, որպես ուրիշի խոսքի կապակցման միջոց, օգտագործվում է ասել բայը և ոչ թե մյուս ասացական բայերը: Դա աղղկեցութիւն է ժողովրդական պարզ ու շաղկապած ոճի:

Ուրիշի խոսքի աղբյուրը մատնանշող բառերը կարող են մեկից ալիւի լինել և լրացնել իրար: Այս երևույթը, որ կոչվում է հալեղադրութիւն, դեռևս պարբարի ամենասիրած ոճական ձևերից է. համար. օրինակ, «...և այսպես հրապուրէր և յորդորէր հանապազ. «Եթէ միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալիքի, և զձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի նշմարտութիւն...» (Եղիշէ, 27): «Արդ յետ այսօր ամենայնի հաւանութեանց յամառեալ ի մէջ բերէն. բնութեամբ են, ասեն՝ շարիք և ոչ կամածինք» (Եղիշէ, 32): Ետ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. «Եթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր շարշարանք նորայ. հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուստն նորա» (Եղիշէ, 21): Ժամանակակից հայերենում այսպիսի ոճը հետևյալ տեսքն ունի. «Սոգը մի զարմացական հայացք ձգեց իմ երեսին... և պատասխանեց ասելով.— Ի՞նչպես քաղել բարի երիտասարդ, ինչպե՞ս պղծել սուրբ հողը» (Րաֆֆի, 8, 254):

* Բերված օրինակներում կետադրութիւնը պահպանել ենք հրատարակութիւններում եղածին համապատասխան:

³ Տե՛ս Ղ և ո՞ն դ Հ ո՞վ ն ա ն յ ա ն, Հետապոտութիւնը նախնեաց ոսականութիւնի վրայ, Վիեննա, 1897, էջ 24:

Միջին հայերենում ևս կան ուղղակի խոսք առաջ բերող այսպիսի հավելադրություններ. հեղինակային խոսքը ունենում է մեկից ավելի ասացական բայեր, որոնք կամ դիմավոր ձևով են կիրառվում, կամ էլ նրանցից մեկը օգտագործված է լինում դերբայով, ընդ որում, հաճախ այդ ասացական բայերից մեկը մտնում է ուղղակի խոսքի մեջ: Օրինակ՝ Նա ինձ պատասխանեց փողոց ձայնով, ասաց. գրեմ (46, 189): Սրտիս անձկալեալ առ բաղձալին դիմեալ. Մի յիս մերձենաւ, ասէ, չեմ ելեալ առ հայր (ՆՇ, 392): «...Անկաւ ի վերայ մորենոյն և ձայնեաց ասելով. Թէ այր ես, և ունիս կարողութիւն՝ դու բնքացիր ուր ես եմ (ՎԱ, 6): Խնդրում էր կանչելով, Հայր ասում էր Աբրահամին, Դժոխքի տաճարի միջից լեզուս, բերանըս պապակին (ԳՔԱԵ, 9):

Միջին հայերենում որպես ուրիշի խոսքը մատնանշող ասացական բայի լրացում կարող է հանդես գալ մի ուրիշ խոսքի մաս, ինչպես, օրինակ, ցուցական դերանունը. Իսկ պատուիրեաց առ հաւրն այսպէս.— Եւ զի փառս սիրես յարդկային, վասն առաջին աշխատութեանց քոց և բազմադեմ փաղափարութեանց... ի ծագաց երկրի բերեմ մարդիկ, որ գովեսցեն զքեզ (էջեր, 125): Տամբ պատասխանի և ասեմք ալսպէս. Եթէ յոր օր ընծայի ցաւն, նոյն ի յօրն այն լինի ջերմն, և ի յոր օր ողջանայ ցաւն, ի նոյն օրն արձակի ջերմն (ՄՀ, 23):

Ուրիշի խոսքը նշող բայերը կարող են լինել անենթակա նախադասության բայ-ստորոգյալներ. Յսվեստարանն կայ գրած, Զինչ որ քեզ կայ՝ տուր տղա-տուց (Ֆրիկ, 314):

Միջին հայերենում հաճախ ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքին միանում է առանց ասացական բայ-ստորոգյալի. այդ դեպքում խոսքը ուրիշին պատկանելը հասկացվում է գլխավոր նախադասության բովանդակությունից, որտեղ ասացական բայի նշանակությամբ գոյական է լինում. օրինակ՝ Խօսքն ինձ հասաւ քո բերանին. «Շատ բարեւ հասցէ Հովնաթանին» (ՆՀ, 10): Սրանից պետք է տարբերել այն երևույթը, երբ ասացական բայը դեղչվում է՝ երկախությունների ժամանակ կրկնությունից խուսափելու նպատակով: Օրինակ՝ Ասէ—ինչ ունիս ոք և կարեաւ: Անդամայրոյձն՝ —ոք՝ զՔրիստոս ունիմ և կարեաւ՝ զիմ խոցերս ծնող՝ զիմ սովս և զկարօտութիւնս, և կեանքս զկուրութիւն աշացս և զտկարութիւն՝ մարմնոյս: Ասէ Յիսուս—Որ համբերէ իսպառ՝ նա կեցցէ: Անդամայրոյձն—Մինչև Ե՞րբ համբերեմ (էջեր, 208):

Հեղինակի խոսքի և ուրիշի ուղղակի խոսքի շարադասությունից կախված է այն հնչերանգային ու հնչարտաբերական կապը, որ գոյություն ունի այդ երկու խոսքերի միջև: Միջին հայերենում հեղինակային խոսքի և ուրիշի խոսքի շարադասությունը հիմնականում բնութագրվում է ուրիշի խոսքի ետադասությունով:

Դարձեալ կու ասէ ֆալաֆն ընդ աղփատ և ընդ թագաւոր. «Աստուած է տրտղ բարեաց, որ առնէ՝ զամէն զաւաւոր...» (Ֆրիկ, 377): Եւ նա ասէ. մի բարկանաւ ինձ ով բարի բագաւոր, զի ահա երդնում ի գլուխ քո՝ որ աշխատութեամբ շրջեցայ ես յամենայն բժշկապետս, վասն քո (ՎԱ, 50): Աղաղակէր պլպուլն ի վարդն.— Առանց քեզ յո՞նց ելնում ի հուն (46, 135): Ինչպես տեսնում ենք, հնչերանգային դադարն այստեղ շատ է: Պատահում է նաև, երբ ուրիշի խոսքը իր մեջ է առնում հեղինակային խոսքը: Այս դեպքում զազարը աննշան է դառնում: Օրինակ՝ Ես կրտսեր եմ, սակայն զնշմարիտն ասեմ:— Ասէ:—Թուի, թէ մտաթափ եղեր, զի թէ դու ոչ տաս վասն քո, ես զիա՞րդ տացից (էջեր, 22): Երբեմն էլ ուրիշի ուղղակի խոսքը մտնում է հեղինակային

խոսքի մեջ, ձուլվում նրան: Օրինակ՝ երբ ծրնայ ու գգանացայ յիշեմ գժո գորն ու դողամ. «Մի ուտեր» պատուիրեցէր, Քո հրամանիդ ես ոչ անսամ (Ֆրիկ, 257):

Միջին հայերենում ավելի հազվագեղ էին շրջուն շարադասության օրինակները, այսինքն, երբ հեղինակային խոսքը հաջորդում է ուղղակի խոսքին, ինչպես օրինակ՝ Այ յորդորէ, գետ յորդորէ, Կեռ Յորդանան, Աւետաւոր ձայնի երգէր Մեծ Կարապետն Յովհաննէս (ՀՅ, 219):

Անուղղակի խոսք — Ուրիշի անուղղակի խոսքն այն է, որ հանդես դալով հեղինակային խոսքի հետ, դառնում է լրացում դիսալոբր նախադասության սրէէ ասացական բայի: Այս դեպքում հեղինակային խոսքի և ուրիշի խոսքի կապը շարահյուսական տեսակետից ավելի սերտ է դառնում: Ուրիշի խոսքը փաստորեն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն է, որը կապակցվում է իր գլխավոր նախադասության հետ շաղկապով:

Երաբարում ուրիշի անուղղակի խոսքը կապակցող շաղկապներն են գի. րէ, երէ: Օրինակ՝ Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ գի «մի կարի գանձն ւո աշխատ առնէր աղջկա, գի աչր բարի ես եմ, բան գնա» (Բող., 317): Եւ այդ ո՞ր իշխիցեն շնջել, որք ասեն՝ րէ հրեշտակք րնդ կանայս ամուսնացան (Եղնիկ, 64):

Միջին հայերենում հեղինակային խոսքի և անուղղակի խոսքի կապակցման դերով հանդես են գալիս րէ (երէ), որ շաղկապները, առաջինի շատ ակնհայտ գերակշռությամբ: Եւ ասէ աղուէն ցգայլն, րէ ուրբարն այդ է, որ ի պարանոցդ անկաւ. և այդ է բարկութիւն աստուծոյ (ՎԱ, 36): Կու սղչեմ ձեզ որ համեմ, որ արգիլեն գամենին տալն (Անս., 41):

Բացի շաղկապից, ուրիշի անուղղակի խոսքի քերականական հատկանիշներն են՝ բայերի եղանակի և դեմքերի՝ հեղինակային խոսքին համապատասխան հարաբերումը, ուրիշի ուղղակի խոսքի ժամանակ օգտագործվող հուղարտահայտչական ռճի դրսևորման միջոցների վերացումը և այլն: Ահա այս տեսակետից մոտենալով միջին հայերենի ուրիշի անուղղակի խոսքի քննությանը, նշատում ենք, որ այստեղ հանդես են գալիս մի շարք առանձնահատկություններ, որոնք որակական փոփոխություն են առաջացնում քերականական այս կապակցության սահմաններում:

ա) Ուղղակի խոսքում հանդես եկող առաջին և երկրորդ դեմքի դերանունները և բայերը մնում են նույնությամբ, փոխանակ վերածվելու երրորդ դեմքի: Այդպես է նաև դրաբարում. Քանգի յոյժ սիրելի էր նմա խոովութիւն, արիւննեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, երէ յո՞ թափեցից գղառնութիւն թիւնից, կամ ո՞ր բացատրեցից գրագմութիւն նետիցն (Եղիշէ, 12):

Սակայն միջին հայերենում այս երևույթը օրինաչափություն է: Օրինակ՝ ...Մեկ այլն որ խիսմն լինի՝ ասէ, րէ ես որ ի յիմ ապրանքն և ի հարկիքն կամ. ես չպարտիմ որ քեզ պացխուն այնեմ, քանի րէ առջն իմ լին պարունին (Անս., 21): Եւ ասէ արագիլն ողորմելի ձայնիւ, րէ՛ ով բարեսէր հողագործ. դու քաջ գիտես, գի ես ոչ բակլայ ուտեմ և ոչ սիսեառն (էջեր, 11): Ուրիշի անուղղակի խոսքի մեջ բայի ու դերանվան այսպիսի դիմալորությունը երբեմն երկդիմություն է առաջացնում և դժվարացնում միտքը ըմբռնելը: Այսպես, օրինակ, երբ ուրիշի խոսքի հեղինակը կրկնում է դիմացինի միտքը, որտեղ խոսքը զնում է իր՝ հեղինակի մասին, ապա այդ խոսքում օգտագործվող դերանունը պետք է առաջին դեմքով դրվի: Մինչդեռ միջին հայերենում ուրիշի խոսքը այս դեպքում

ևս մնում է բացառել. Սուրբ կոյսն ասաց Գաբրիելի, թէ «Այդ բանիդ ո՞վ հա-
ւատայ: Զարմանալի բան կու խաւսիս, թէ Տէրն ի քեզ խոհարհանայ. երբ ես
մեզաց տեղեակ չըլնիմ, զիա՞րդ յինէն գայ մարմնանայ (Ֆրիկ, 282): Միայն
վերջին նախադասությունից է հասկանալի դառնում, թե տերը պետք է Մա-
րիամին խոնարհւի և ոչ Գաբրիելին:

բ) Միջին հայերենում անուղղակի խոսքի մեջ, ուղղակի խոսքի նման,
հանդես են գալիս բացականչական արտահայտությունները, կոչականները,
հարցական, հանդիմանական բառերը: Օրինակ՝ Յորժամ հարցանես ըզքեզ, թէ
ըզՏէրն ուստի՞ նանաչես, բանին պատասխան ի՞նչ տաս, է՛յ հազար գործաւ
սեւերես (Ֆրիկ, 393-4): ...Թէ կարենան գտնուլ զինք ի տեղն, նա մեկն ասէ ու
երկուքն վկայեն, թէ «Փուլան, քո պարուն ժողվել է զդարպասն վասն քո, որ
ասցել ես ու այրել ես զիսայ ու զիսայ... (Անս., 15): Բլբուլն ասէ, թէ՛ վարդ
աննառ, Սիրտրդ զեղին, ի՞նչ է պատճառ. Քեզ ի՞նչ հրնար առնեմ ու նար
(Կե, 121): Եւ գայ վասն այնոր առջև պարունին կամ պայլոյն ու ասէ, թէ «Իմ
պարուն, ես աւղղածեմ ի ֆուլան կապլվոր, ու բաժին մի այլ անսիզվորք կան, և
կու առջրնտրեն զիս» (Անս., 41): Գաբրիելեան փողն գոչէ, թէ՛ Անայ գայ Քրիս-
տոս արեալ (Ֆրիկ, 285):

գ) Ուղղակի խոսքին հատուկ հարցական, հրամայական նախադասու-
թյունները այստեղ մնացել են նույնը, փոխանակ վերածվելու պատմողակա-
նի. օրինակ՝ Իշուն ալետիս մատուցին՝ թէ ցնծա և ուրախ լեր և տուր մեզ
օժիսս. զի թոռն ծնաւ քեզ (ՎԱ, 88): Եւ դարձեալ ասէ առիւծն րնդ աղուէսն՝
թէ բաժանէ՛ գոշխարսդ ի վերայ մեր (ՎԱ, 20): Դարձաւ գայն ճյուղաւ պ երես.
թէ՛ ի՞նչ անեմ, լեզուս կապեցաւ... (ՆՔ, 44):

Ինչպես տեսնում ենք այս բոլոր օրինակներից, միջին հայերենում ուրիշի
անուղղակի խոսքի և ուղղակի խոսքի տարբերությունը դուրս կապակցական
բնույթ է կրում. նախադասության կազմի մեջ քերականական տեսակետից
զրեթե նյութական փոփոխություններ չեն նկատվում. բայերի դիմափոխություն
չի կատարվում, բացականչական բառերն ու նախադասությունները, կոչա-
կանները, հրամայական նախադասությունները և այլն մնում են անփոփոխ:

Այլ խոսքով, ուրիշի անուղղակի խոսքը պահպանում է ուրիշի ուղղակի
խոսքի քերականական-շարահյուսական բոլոր առանձնահատկությունները, և
ստացվում է այնպիսի կառուցվածք, որի մեջ միայն թե շաղկապի առկայու-
թյունն է նրան նմանեցնում ուրիշի անուղղակի խոսքին:

Բնականորեն առարկություն կարող է առաջանալ միջին հայերենի ուրիշի
խոսքի նման տեսակը առանձնացնելու հարցում, քանի որ ուրիշի խոսքը տվյալ
դեպքում նույնությամբ պահպանված ուղղակի խոսքն է, անհրաժեշտ չէ՞
արդյոք այն համարել ուղղակի խոսք, անտեսելով թե շաղկապի առկայու-
թյունը:

Միջին հայերենում անհրաժեշտ է տարբերել այսպիսի ընդհանուր, դեռևս
չտարբերակվող կառուցվածքների երկու տեսակ՝ ա) ...ասացական բայ + շաղ-
կապ + ուղղակի խոսք և բ) ...շաղկապ + ուղղակի խոսք:

Ծագումով առաջին տեսակը յուրահատուկ անցումային վիճակ է ուրիշի
ուղղակի խոսքից անուղղակի խոսքին: Այսպիսի կառուցվածքը անուղղակի հա-
մարել չի կարելի՝ ուղղակի խոսքին հատուկ հատկանիշների պատճառով և միև-
նույն ժամանակ ուղղակի չի կարելի համարել, որովհետև ուրիշի խոսքը հնդի-
նական խոսքին միանում է շաղկապով, ինչպես, օրինակ, Կասեմ թէ՛ Աղկեկ

ես դուռն: նա կասի, քէ, Տէրն է ավեր (ԵԺ, 106): Զայս յիմարքն կու ասե, քէ անաշխատ հարքստանամ (Ֆրիկ, 262):

Այսպիսի կառուցվածքներ հանդիպում էին նաև զրարարում, որտեղ հեղինակային խոսքում ասացական բայի կամ նրան փոխարինող բառի հետ միասին կարող է օգտագործվել նաև շաղկապը. Բայց Բանգի պատուիրանապահն էին սուրբ կտակարանացն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալսն ի Պաւղոսէ, Եթէ, Ծառայք, հնազանդ լերուք տւերանց ձերոց մարմնաւորաց (Նդիշէ, 18):

Երկրորդ տեսակի կառուցվածքը (...շաղկապ + ուղղակի խոսք) ավելի մոտենում է ուղղակի խոսքին: Եթե առաջին տեսակի մեջ շաղկապը կապակցում է ուրիշի խոսք-երկրորդական նախադասության, ապա երկրորդ տեսակում շաղկապը արդեն ասացական բայի պաշտոն ունի և մատնացույց է անում ուրիշի խոսքի: Այն էլիպտիկ համարել չի կարելի, որովհետեւ այնտեղ ասացական բայը դեղձված չէ վերականգնման հնարավորությամբ:

Այսպիս, միջին հայերենում խոսող կամ գրող անհատը հենց քէ-ն առանց ասացական բայի կարող էր օգտագործել որդիս ուրիշի խոսքը նշող բառ: Բերինք օրինակներ. Զերայ շատ մարդ բռնեցին, շատ տուն կոխեցին, քէ Ավդալէն ձեռ տուն սյ կամ դու խաբար ես (ԶԱ, 112): Դարպասն պատեմ է, որ առջի տարպայն ավտայ իր և յուղարկէ հետ մի այլ. քէ Արեկ, քո խսմին իրաւաւ (ԱՆս., 25): Մնաղն ի ծունկն ակնաւ որդոյն, քէ մեկ խրնդիր ինձ առ քեզ կայ, քող գիս ի յայս տեղիս քաղեն. ինձ գերեզման այս լինենայ (Ֆրիկ, 284): Կւսմ' մ' եմ բժիշկ եղել, քէ դեղ ունիմ խիստ օգտակար, խոցեն գառողն ի սիրտըն, ու հիւրնդին եմ մահաբար (ԿԵ, 200): «Մարմինն ի հողումն ի դուրս մէկ խօսք գնդին վրձարեց քէ «ես հող էի՝ հող դարձայ, քո ամալն է, բզբեզ բռնեց» (ՀԵ, 158): Նույնիսկ նույն տեքստը միջնադարից մեզ ավանդված երկու տարբեր ձևադրերում հանդիպում է հետևյալ կառուցվածքով.

Ասէ քագատուն.— Երբ դու այդպես սփանչեալգործ մարդ ես, բնդէ՞ր իմ ծառայէն շագատեցար, որ այդպես հրապարակաւ և կապանօք բերին գբեզ (ԼճԵր. 78, ձև. ա):

Ասէ քագավորն, քէ—քէ դու այդպես սփանչելի շնորհք ունիս, ինչո՞ւ իմ ծառանուն ձեռացն չի ագատեցար, որ անառակ հրապարակ բերին գբեզ (նույն տեղում, ձև. Ե):

Այսպիսով, ուրիշի անուղղակի խոսքը միջին հայերենում դրսևորվում է այնպիսի կառուցվածքով, որի քերականական հատկանիշներից փաստորեն միայն մեկն է պահպանվում՝ ուրիշի խոսքը որպես երկրորդական նախադասություն իր գերադասին միանում է քէ շաղկապով: Եվ միայն այդ հատկանիշի շնորհիվ է, որ մենք քննվող կարգի շարահյուսական կառուցվածքը դասակարգում ենք ուրիշի անուղղակի խոսք բաժնում: Եթե հիշենք նաև, որ միջին հայերենի մեղ ծանոթ գրականության մեջ չի հանդիպել ուրիշի խոսքի իսկական (իր բոլոր հատկանիշները պահպանած) տեսակ, ապա կարելի է ասել, որ ուրիշի խոսքի սկզբում հանդես եկող քէ-ն միջին հայերենում հեղինակային խոսքին կապակցում է ոչ թե անուղղակի խոսք, այլ ուղղակի խոսք: Պատահական չէ, որ միջնադարի առավել ուշ շրջանի ստեղծագործություններում, որոնց մեջ ժողովրդական խոսվածքի կնիքը ավելի ուժեղ է արտահայտված, քէ-ի՝ ասացական բային փոխարինելու այս դերը քերականորեն ավելի է ամրապնդվում: Եթե վաղ շրջանի մատենագրությունից քաղված օրինակներում

թէ-ն ասացական բաւի հետ հանդես է գալիս որպէս ավելագործություն, ասլա հետագայում նա առավել ցայտուն է դրսևորում ուրիշի ուղղակի խոսքը միայնակ կապակցելու իր դերը, այսինքն՝ շարահյուսական ավելագործությունից վեր է ածվում քերականական ինքնուրույն միավորի: Համեմատենք հետևյալ օրինակները.

Մի մեղադրեմ Մարտիրոսիս, թէ կարճառօտ ասիր բզղա (ՄՂ., 99): Առեմ գիս յիմ յարն տաււմ, թէ հազար կողերս է լոսած, Ջերեսս երեսին ղնեմ և երղնում, թէ տեղ չի ցավաց (ՆՔ, 41): Նլնես դու ի ձեր տանեն, լուկ աշոբյւ անես, թե սիրէ (նույն տեղում, 48): Այս ֆոնանսիս մեծ մարդն օսմանցիք բռնեն, թէ կամ բերքն տուր, կամ չի՝ ես մարդս տալ չեմ (ՁՄ, 99):

Ուրիշի խոսքի՝ նկարագրված տեսակը բնորոշվում է շարահայտության հտադասությունմբ, նախադաս դործածությունը բացառված է:

Գոյություն ունի ուրիշի անուղղակի խոսքի մի այլ տեսակ ևս, որ ժամանակակից քերականության մեջ կոչվում է գործարարական անուղղակի խոսք: Այսպիսի խոսքը մեջ բերելիս հեղինակը նպատակ ունի ճիշտ տալ ուրիշի խոսքի բովանդակությունը, կարևորություն շտալով այդ խոսքի ոճական, ձևական կողմին: Սա ավելի շուտ գործածվում է դիտական, պատմական աշխատություններում: Այդպիսի անուղղակի խոսքի հաճախագեպ կիրառություն ենք նկատում Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» գրքում, ինչպես և առհասարակ բժշկագիտական գրականության մեջ:

Օրինակ՝ Ապուլներինն ասէ, երբ այս ջերմս որ ի պատճառն ի սովոյ և ի յանաւթի կենալոյ լինի, իւր պատճառն այն է, որ գոլորշին որ է պոխարն ամենայն մարմնում ջերմացեալ աւանան... (Մխ. Հերացի, 26): Սահակ ասէ, թէ իւր ստածումն այն է, որ ի բաղանիս կիսատաֆ ջրով յաւազան մտէ, և զմարսինն մանուշակի ձիթով օծանէ, և հաճապագ ի հով և ի զիհային ծաղկունս հոտոտայ (Մխ. Հերացի, 19):

Բժշկագետի նպատակն է եղել տալ ուրիշ բժիշկների խորհուրդները հիվանդությունների առաջացման և բուժման մասին, և տվյալ դեպքում բոլորովին էլ կարևոր չէ, թե ինչպես են իրենց մտքերն արտահայտել Մուսավայի որդին կամ Սահակը, այլ կարևորն այն է, թե ինչ են ասել:

Հնդհանրացնելով ուրիշի անուղղակի խոսքի մասին մեր դիտողությունները, կարող ենք ասել, որ ուսումնասիրվող շրջանում այն գտնվում է իր ձևավորման նախնական շրջանում: Ճիշտ է, գրաբարում ևս նկատվում են ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերի նման խառն կառուցվածքներ, երբ անուղղակի խոսքը հեղինակային խոսքի հետ կապակցվում է շաղկապով՝ մնացած բոլոր հատկանիշներով մնալով ուղղակի խոսք, ինչպես, օրինակ՝ ...սօսեր ընդ նմա և ասէր՝ եթէ ընդէ՞ր մոռացար գտէրն» և թողեր զպատուիրանս նորա... (Բուզ. 110), սակայն ի տարբերություն միջին հայերենի, գրաբարին խորթ չէ նաև ուրիշի անուղղակի խոսքի այն տեսակը, որն իր բոլոր օրինաչափություններով համապատասխանում է քերականական այս երևույթին տրվող սահմանմանը (ունի ասացական բայ, կասվում է ստորագասական շաղկապով, ասվում է երրորդ դեմքով և այլն):

Օրինակ՝ «Ապա իբրև յանհնարին մտանէին իրեն, և պնդեալ համառէին ամենայն բազմութիւնն՝ զի մի գայրն սպանցէ... (Բուզ., 99): Այդ տեսակը ժամանակակից գրական հայերենի համար ամենաբնութագրականն է: Օրինակ՝ Մի անգամ այսպիսի այցելություններ ունենալուց հետո հայտնեց, թէ եզյանից

համաձայնություն է ստացել, և պետք է պատրաստություն տեսնեմ մեկնելու Կարին՝ Սանատարյան վարժարանի իբր ուսուցիչ հայերեն լեզվի (2. Աճառյան, «Կյանքիս հուշերից», 1968, 138)։

Միջին հայերենում, ինչպիսի ասվեց, ուրիշի անուղղակի խոսքի այսպիսի ձև մեզ զուգահեռ չի հանդիպել։

Անխակական ուղղակի խոսք — Ուրիշի խոսքի հաղորդման մի ձև ևս գոյություն ունի՝ անխակական ուղղակի խոսքը։ Ինչպիսի կրեում է անվանումից, այսպիսի խոսքը նման է և՛ ուղղակի խոսքին, և՛ անուղղակի-խոսքին։ Ուղղակի խոսքին նման է այն դեպքում, երբ ուրիշի խոսքը մեջ է բերվում ուղիղ ձևով, սակայն առանց ասացական բայի։ Բացառված չէ նաև, որ անխակական խոսքը կարող է ստորադասական նախադասության նման՝ շաղկապով կապվել գլխավոր նախադասությանը։ Այդ դեպքում այն կնմանվի անուղղակի խոսքին։ Երբ ուրիշի խոսքը չունի ոչ ուղղակի խոսքի, ոչ էլ անուղղակի խոսքի բոլոր անհրաժեշտ հատկանիշները, դառնում է անխակական ուղղակի խոսք։ Այսպիսի խոսքը միաժամանակ ոճական առանձնահատկություն է, որը դրական լեզուներում առաջանում է նրանց պատմության համեմատաբար ուշ շրջանում⁴, Այսպիսի խոսքը համեմատաբար բարձրարժեք ու դարգացած գրականության ստեղծման հետ է կապվում, որովհետև փաստորեն գրողի ստեղծագործական հմտության շնորհիվ է, որ ստեղծվում են տարբեր մտածողական-սուբյեկտային պլաններ։ Այս դեպքում ընթերցողը պետք է տարբերի, թե ո՞րն է հեղինակի անվերաբերական խոսքը ընդհանրապես, և ո՞րը հերոսի ներքին հուղաշխարհի արտահայտությունը։

Հայոց լեզվի պատմության քննվող շրջանում վերոհիշյալ տարբեր սուբյեկտային պլանների օգտագործման շարահյուսական միջոցի կիրառման առաջին ազդու նմուշները նկատվում են Հովհաննես Երզնկացու և Ֆրիկի մոտ, որոնք իրենց ոտանավորների մեջ հաճախ ընդհատում են նկարագրական, պատմական խոսքը և դիմում ուրիշի խոսքով։ Յուստաբ աշխարհ եմ վրտաբաժ, Խաշն արածել ի յոշ կամաց. Պուտ եմ կերել հացի փոխան, Զալն ու խոզիցն էր նա կերած։ Ըզսբուրիսն ես տուի շանց, Ըզմարգարիտն արկի խոզաց, բեր մէկ ար զխելիդ ի վերայ, Թէ է՞ր կու կենամ ես աստ սոված (Ֆրիկ, 313)։ Հեղինակը իր խոսքի մեջ ինքն իրեն (որ է՝ իր հերոսին) խրատում է, և այս դեպքում բայի ու ղերանվան առաջին դեմքը օգնում են հարցը տպավորիչ դարձնելու, ընդգծելու հեղինակի ցանկությունը, որ «սոված կենեղը» ինքը զղա, ինքը մտածի իր վիճակի մասին։ Այսպիսի խոսքերի զուգագործությամբ միջնադարյան բանաստեղծները կարողանում են արտահայտել ինչպես սեփական, այնպես էլ իրենց հերոսի ներաշխարհի բազմազան տպավորություններ, բազմազան ապրումներ։ Սկզբունքորեն այսպիսի խոսքը շատ է նման եւրիշի

⁴ Ռուսերենում, օրինակ, շարահյուսական այս միջոցի լիակատար ձևավորված տեսակի օգտագործման առաջին նմուշները կիրառվում են տասնիններորդ դարից սկսած։ Այսպես, Գ. Ինֆանտովայի «Ոչ սեփական ուղղակի խոսքի քերականական առանձնահատկությունները ժամանակակից ռուսերեն լեզվում» դիսերտացիայի ավտորի ֆերատում գրված է. «Ուսումնասիրվող տարատեսակի (խոսքը անխակական ուղղակի կամ ինչպես ինքն է անվանում՝ ոչ-սեփական ուղղակի խոսքի մասին է — Լ. Կ.) տարբեր սուբյեկտային պլանների համատեղման միջոցի, ինչպես նաև տվյալ միջոցի ընդհանուր առմամբ ուստեմատիկ օգտագործման սկիզբը կապված է Պուշկինի ստեղծագործության հետ» (Լ. Կ. И н ф а н т о в а, Грамматические признаки непосредственно—прямой речи в современном русском языке, автореферат. 1962. Ленинград, стр. 8)։

ուղղակի խոսքի շաբաժնուական կառուցվածքին. Գոչէր ձայնի ողբալի, Զբանսն որ ասէր սոսկալի, Շարժէր զամէն մրսեղի, Յուր և ի կոծրս բանի. «Յիսուս որդի անձկալի, Իմ միածին բաղձալի, Բնդէ՞ր կաս մերկ ի իսաչի, Եւ բնեռնալ ի փայտի» (ՀԵ, 243):

Անխակական ուղղակի խոսքի արտահայտության ձևերով ևս միջին հայերենը տարբերվում է ժամանակակից հայերենից: Անխակական ուղղակի խոսքը, ինչպես ասվեց, իր բնույթով երկակի է. որոշ հատկանիշներով նա նման է ուղղակի խոսքին, այլ հատկանիշներով՝ անուղղակի խոսքին: Վերջին տեսակն այն է, երբ հեղինակը իր պատմության մեջ օգտագործում է բառեր ու արտահայտություններ, որոնք հեղուկին են: Թվում է, թե հերոսն է խոսում, բայց իրապես հեղինակը հերոսին պատկանող կամ նրանից սպասելի արտահայտություններով կարողանում է յուրահատուկ կոլորիտ ստեղծել: «Այդ էր նրանց վիճակը և նրանցից շատերը նույնիսկ ամուսնու պաշտոնը չգիտեին, այլ միայն գիտեին, որ նա զավթարիսանայի մեծերից է, և նրանցից բարձր միայն երկու բեյ կա՝ այսինչը և այնինչը, իսկ մնացած բոլոր բեյերը նրանից քաջ են, նրանց կանայք իրենից քաջ են, նրանց երեխաներն ի՞նչ են, որ խաղան իր երեխաների հետ» (Բակունց, 1955, 330):

Այս խոսքերի ետևում երևում են բեյերի սահմանափակ կանայք, իրենց հոգեբանությամբ, աշխարհայացքով: Եվ այս արդյունքը ստացվել է անխակական ուղղակի խոսքի օգտագործման շնորհիվ: Այս տիպի անխակական ուղղակի խոսք (կրկնենք, որը նման է ուղղակի խոսքին), միջին հայերենի մեզ ծանոթ գրականության մեջ չի հանդիպում: Եվ այս առանձնահատկությունը, և այն, որ անուղղակի խոսքը նման է ուղղակի խոսքին, միջին հայերենի համար սլատահական չեն, այլ պայմանավորված են նրանով, որ, լինելով ժողովրդական խոսվածքին շատ հարազատ, «զեղչուկ բան», միջին հայերենը ժառանգել է նաև այն տրամաբանական, շարահյուսական, արտահայտչական ձևերը, որոնք հատուկ են ժողովրդին: Հիմա էլ մեր բարբառներում և հասարակ ժողովրդի համար խորթ է ուրիշի խոսքի անուղղակի հաղորդումը:

Այս ևս ապացուցում է, որ միջին հայերենում ուրիշի խոսքի քերականական կատեգորիան իր լինելիության վիճակում է գտնվում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անս. — Անսիգ Անտիոքայ

Բուզ. — Բուզանդ

ԳՔԱԵ — Գամառ Քաթիպա «Աղղային երգարան»

ԶԱ — Զաքարիա Ազուլեցի

Էջեր — Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից

ԿԵ — Կոստանդին Երզնկացի

ՀԵ — Հովհաննես Երզնկացի

ՄՂ — Մարտիրոս Ղրիմեցի

ՄՀ — Մխիթար Հերացի

ՆՀ — Նազաշ Հովնաթան

ՆՇ — Ներսես Շնորհալի

ՆՔ — Նահապետ Քուշակ

ՎԱ — Վարդան Այգեկցի

КОСВЕННАЯ РЕЧЬ В СРЕДНЕ-АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Л. Л. КАРАПЕТЯН

Р е з ю м е

В данной статье исследуется выражение синтаксической категории чужой речи в среднеармянском языке.

Будучи необработанным и ненормированным языком, среднеармянский унаследовал особые синтактико-структурные формы, присущие народноразговорному языку. Это наиболее отчетливо проявляется в косвенной речи, которая по своим признакам очень похожа на прямую речь. Это один из фактов, доказывающий сильное влияние народного языка. И сейчас разговорному языку и диалектам не присуща передача чужой речи в косвенной форме (соответствующие изменения лиц глаголов и местоимений, утрата междометных слов, обращений и т. д.).

В статье исследуются также два вида чужой речи: прямая речь и несобственно прямая. И в них также наблюдаются присущие данному времени закономерные изменения.